ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՕՏԱՐԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[6]

Մկրտումյան Մ.Պ. (Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ, Երևան, Հայաստան)

dr-mkrtumyan@mail.ru

Ներկայացման ամս.՝ 16.09.19
գրախոսման ամս.՝ 15.01.20
տպագրության ընդունման ամս.՝ 17.02.20

Հոդվածում քննարկվում են կենսագործունեության տարբեր պայմաններում դեռահասների հոգեբանական օտարացման երևույթի դրսևորումները, սոցիալ-հոգեբանական դետերմինանտները: Բացահայտվել են հոգեբանական օտարացման և հոգեբանական անվտանգության կորստի մեխանիզմներն ու դրանցում դիտարկվող վարքային փոփոխությունների հոգեֆիզիոլոգիական օրինաչափությունները:

Հանգուցային բառեր՝ *հոգեբանական օտարացում, հոգեբանական անվտանգություն, ապահարմարում, հուզական անկայունություն, խոցելիություն:*

Ժամանակակից կյանքի սրընթաց զարգացումներն ու սոցիալ-տնտեսական, անբարենպաստ փոփոխությունները հաճախ հոգեբանական անվտանգության սպառնալիքներ են հանդիսանում հասարակական ինտեգրման ձգտող դեռահասների համար: Անցումային այս փուլում հասակակիցների հետ անզիջում մրցակցությունը, սոցիալականացման համար անհրաժեշտ հմտությունների ցածր մակարդակը, կամ երբեմն դրանց բացակայությունը, ընտանեկան, անձնական կյանքի դժվարությունները սովորական պայմաններից դուրս հարաբերություններում երեխաներին դարձնում են անկարող, սթրեսորների նկատմամբ զգայուն: Փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ հոգեբանական աշխատանքների բացակայության դեպքում դեռահասների հոգեկան ոլորտում կարող են ձևավորվել հոգեբանական նորագոյացություններ՝ ֆրուստրացիայի, հոգեբանական անվտանգության կորստի, անձի ինքնագնահատականի ցածր մակարդակով, միջանձնային հարաբերություններում օտարացվածության զգացման և այլ ձևերով [5, էջ՝ 20]:

Հոգեբանության բնագավառում առաջին անգամ «օտարացում» հասկացությունն օգտագործվել է Զ. Ֆրեյդի կողմից՝ թշնամական բնույթ ունեցող միջավայրում անձի պաթոլոգիական զարգացումը բացատրելու համար [7, էջ՝ 52]: Զ. Ֆրեյդից հետո հիմնահարցին անդրադարձել են բազմաթիվ

[6] *Հետազոտությունների կազմակերպման և հրատարակության ծախսերը ապահովվել են ՀՀ ԳՊԿ-ի կողմից ֆինանսավորվող 11-5a.571 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում.*

գիտնականներ [3, 5, 8]: Ե. Ալեկսեենկովան առանձնացնում է հոգեբանական օտարացման կամ դեպրիվացիայի հետևյալ տեսակները՝ զգայական (ստիմուլային), կոգնիտիվ, շարժողական, հուզական, սոցիալական, էկզիստենցիալ, կրթական և այլն [3, էջ՝ 77]: Հեղինակը առանձնացրել է նաև օտարացման կառուցվածքի կոգնիտիվ, հուզական-գնահատողական, սոցիալ-հոգեբանական, հաղորդակցական, վարքային բաղադրիչները [3, էջ՝ 80]: Հոգեբանական օտարացման հիմնահարցի հետազոտման նպատակով մեր աշխատանքում կարևորել ենք դեռահասների սոցիալականացման գործընթացում գոյություն ունեցող մի շարք գործոններ (հաղորդակցման դժվարություններ, սոցիալական մեկուսացվածության մակարդակ, անհատական առանձնահատկություններ, հոգեբանական անվտանգության սուբյեկտիվ գնահատականի մակարդակ և այլն) ու դրանց հետևանքով նրանց հոգեկանում ձևավորվող մի շարք նորագոյացությունների դետերմինանտները:

Ուսումնասիրության օբյեկտը 11-13 տարեկան դեռահասների սոցիալ-հոգեբանական վարքագծի փոփոխություններն են, իսկ առարկան՝ նրանց հոգեբանական օտարացման առանձնահատկությունները: Աշխատանքի նպատակն է՝ 11-13 տարեկան դեռահասների հոգեբանական օտարացման առանձնահատկությունների ուսումնասիրությունն ու դրա սոցիալ-հոգեբանական բնութագրերի ներկայացումը: Ըստ հետազոտության վարկածի՝ ենթադրվում է, որ 11-13 տարեկան դեռահասների հոգեբանական օտարացումը պայմանավորված է նրանց անհատական և տարիքային առանձնահատկություններով, շփվողականության և հաղորդակցական ցածր հնարավորություններով, հոգեբանական անվտանգության սուբյեկտիվ զգացման ցածր ինքնագնահատականի և սոցիալական մեկուսացվածության մակարդակներով:

Առաջադրվել են հետևյալ խնդիրները. ծնողական խնամքից զրկված դեռահասների անհատական առանձնահատկությունների, հաղորդակցական խնդիրների առկայության, սոցիալական մեկուսացվածության ուսումնասիրություններ, ցածր տրամադրության նկատմամբ հակվածության, ինչպես նաև հոգեբանական անվտանգության սուբյեկտիվ զգացման ինքնագնահատականի ուսումնասիրություններ և այլն: Դրանց իրականացման համար կիրառվել են հետևյալ մեթոդիկաները.

1. Կետտելի անձնային առանձնահատկությունների 16 գործոնային թեստի մանկական տարբերակը [1, էջ՝ 154-166],
2. Անձի սոցիալական մեկուսացվածության մակարդակի էքսպրես-դիագնոստիկայի թեստը [9, էջ՝ 95],
3. Դեռահասների հաղորդակցական հակումների մակարդակը որոշող մեթոդիկան [9, էջ՝ 45],
4. Դեռահասների հոգեբանական անվտանգության զգացման ինքնագնահատականի մակարդակի էքսպրես-դիագնոստիկայի թեստը [8, էջ 62],

5. Դեռահասների՝ ցածր տրամադրության հակվածության էքսպրես-դիագնոստիկայի թեստը [8, էջ՝ 32]:

Հետազոտության սկզբնական փուլում աշխատանքներն իրականացվել են Երևանի Դանիել Վարուժանի անվ. թիվ 89 հիմնական դպրոցում: Հոգեբանական օտարացման երևույթի ուսումնասիրման համար 5-7-րդ երեք դասարաններից առանձնացրել ենք 11-13 տարեկան 60 դեռահասներ: Այնուհետև որպես ստուգիչ խումբ, նրանցից առանձնացրել 20 աշակերտներ (10 աղջիկ, 10 տղա), որոնց վարքագծում դիտարկվել են հոգեբանական օտարացման երևույթի դրսևորումներ: Որպես հետազոտական հիմնական խումբ, առանձնացվել են նաև Իջևանի ,,ՍՕՍ,, մանկական գյուղի ծնողական խնամքից զրկված 20 դեռահասներ (10 աղջիկ, 10 տղա): Հետազոտությունն իրականացվել է՝ ուսումնական հաստատություններում՝ անհատական թեստավորման և զրույցների ձևով:

Անձնային առանձնահատկությունների հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ մանկական գյուղի աղջիկների խմբում դիտարկվում է ինքնավստահության, ինքնուրույնության դրսևորման ցածր մակարդակ, արտահայտված տագնապայնությամբ: Դրսևորվում են նաև ցածր շփվողականության ու հաղորդակցման հնարավորություններ: 33%-ի մոտ բարձր է հուզական կայունությունը: Քիչ թե շատ նրանք կարողանում են կառավարել սեփական հույզերը, համեմատաբար հանգիստ են, անվրդով: 100%-ի մոտ դիտարկվում է անկախության ցածր մակարդակ: 66% -ի մոտ արտահայտված է ցածր խոհեմության մակարդակ: Հետազոտության համաձայն՝ տղաների մեծամասնության՝ 77%-ի մոտ դիտվում է էքստրավերտության բարձր մակարդակ, ինչը, հավանաբար, պայմանավորված է նրանց տարիքին բնորոշ ցուցադրական վարքագծով, որը հանդես է գալիս որպես պաշտպանական, փոխհատուցող հակազդեցություն:

Ստուգիչ խմբի (ընտանիքում ապրող) դեռահասների արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ վերջիններիս մոտ համանուն բնութագրականներում, ընդհանուր առմամբ ինչպես աղջիկների, այնպես էլ տղաների խմբերում միջին տվյալներ են գրանցվել, դիտարկվում են բարձր շփվողականության և ինքնագնահատականի մակարդակներ: Էքստրավերտության մակարդակը աղջիկների խմբում 73%, իսկ տղաների խմբում այն կազմում է 45%:

Անձի սոցիալական մեկուսացվածության մակարդակի էքսպրես-դիագնոստիկայի արդյունքների համաձայն՝ «ՍՕՍ»-ի խմբում ընդգրկված տղաների 53%-ի մոտ դիտարկվում է սոցիալական մեկուսացվածության բարձր, 16%-ի շրջանում՝ ցածր, և միայն 33%-ի մոտ միջին մակարդակ: Աղջիկների 33%-ի մոտ դիտարկվում է սոցիալական մեկուսացվածության բարձր, 50%-ի մոտ՝ միջին և 33%-ի մոտ՝ ցածր մակարդակ:

Հաղորդակցական հակումների մակարդակը որոշող մեթոդիկայի ցուցանիշներում «ՍՕՍ»-ի տղաների 77%-ն ունի հաղորդակցական հակումների ցածր մակարդակ, 22%-ը՝ միջին: Հաղորդակցական հակումների 10% միջին և 90% ցածր մակարդակ է գրանցվել ընտանեկան պայմաններում ապրող աղջիկների խմբում: Հաղորդակցական հակումների բացակայություն է դիտարկվում նաև «ՍՕՍ»- ի գրեթե բոլոր աղջիկների շրջանում:

Հոգեբանական անվտանգության սուբյեկտիվ զգացման ինքնագնահատականի մակարդակի էքսպրես-դիագնոստիկայի արդյունքների համաձայն՝ «ՍՕՍ»-գյուղի տղաների 33%-ն ունի ցածր ինքնագնահատական, 33%-ը՝ բարձր, 33%-ը՝ միջին: Աղջիկների միայն 33%-ն ունի բարձր ինքնագնահատական, 66%-ի մոտ դրսևորվում է միջին մակարդակ:

Ցածր տրամադրության նկատմամբ հակվածության էքպրես-դիագնոստիկայի թեստի տվյալների համաձայն՝ «ՍՕՍ»-ի տղաների 96%-ի մոտ առկա է ցածր տրամադրության հակվածություն: Աղջիկների խմբում՝ այն կազմում է՝ 80%: Ընտանեկան պայմաններում ապրող աղջիկների խմբում 30%-ի մոտ առկա է ցածր տրամադրության հակվածություն, 70%-ի մոտ՝ այն բացակայում է: Տղաների միայն 46%-ի մոտ է դիտարկվում ցածր տրամադրության հակվածություն:

Դիտարկումներն ու մեր նախկին հետազոտությունների արդյունքները վկայում են, որ հաղորդակցման դժվարություններն ու տարբեր պատճառներով դրա պայմանների բացակայությունը երեխաներին դարձնում է մեկուսի, սահմանափակում հասակակիցների հետ շփման հաղորդակցման ակտիվությունը, ձևավորում ինքնուրույնության, բազմակողմանի ապահովվածության և ապագայի նկատմամբ վստահության ցածր ինքնագնահատական[7, էջ՝ 220]: Հաղորդակցական օտարացումը մարդու օտարացումն է մարդուց, որը բնութագրվում է նաև անձնական հարաբերությունների ճգնաժամով (նույն տեղում): Դիտարկումներն ու հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հոգեբանական օտարացումը դեռահասների շրջանում արտահայտվում է հասակակիցների և մեծերի նկատմամբ ապրումակցման, համագործակցության դեֆիցիտով: Դրանց հիմքում ընկած են իր ու հարազատների առողջությանը, անվտանգությանն ուղղված հավանական վտանգների, սպառնալիքների վերաբերյալ երեխայի ունեցած կասկածները, իրական և քողարկված վախերը՝ [8, էջ՝ 157]: Հոգեբանական անվտանգության ապահովվածության առումով՝ դեռահասների սոցիալականացման դժվարություններն ու անպաշտպան վիճակը նրանց դարձնում է զգայուն և խոցելի: Առօրյա կյանքում նրանք կորցնում են ապահովության, հոգեբանական անվտանգության զգացումը: Այս տեսանկյունից, դեռահասների հոգեբանական անվտանգության կորստի զգացումն ու հոգեբանական օտարացման գործընթացները պարունակում են ընդհանրական հոգեֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական հիմքեր:

Այսպիսով՝ ընտանեկան պայմաններում ապրող դեռահասների խմբում հոգեբանական անվտանգության զգացման ինքնագնահատականի ցածր մակարդակ ունեցողներն ավելի շատ են, քան «ՍՕՍ»-ում: Ըստ երևույթին «ՍՕՍ» գյուղում ապրող դեռահասների շրջանում գործում է կոլեկտիվ անվտանգության գործոնը: Դեռահասների երկու խմբերում հաղորդակցական հակումների և սոցիալական մեկուսացվածության մակարդակների ցուցանիշներում առկա է նշանակալի բացասական համահարաբերակցական կապ՝ r=-0,6: Դեռահասների սոցիալական մեկուսացվածության և հոգեբանական անվտանգության զգացման ինքնագնահատականի մակարդակների միջև ևս դիտվում է նշանակալի ուղղագիծ բացասական համահարաբերակցական կապ՝ r=-0,6: Դեռահասների՝ ցածր տրամադրության հակվածության ցուցանիշների և ինքնամփոփության գործոնի միջև դիտարկվել է ուղղագիծ դրական ուժեղ համահարաբերակցական կապ r=0,9:

Ընտանիքը մարդու համար «մենք» հասկացության սոցիալ-հոգեբանական բովանդակության լիարժեք ձևավորման հիմնական միջավայրն ու պայմանն է: Այն դեռահասի պաշտպանվածության, անվտանգության զգացման հիմնական պատվարն է [2, էջ՝ 61]: ,,ՍՕՍ,, գյուղի և համապատասխան հաստատություններում ապրող երեխաների համար «մենք» հասկացությունը կրում է յուրայինի շատ խոր իմաստ: Առօրյայում նրանք ամենուր իրար պաշտպանում են «օտարներից»: Հանգամանքների բերումով նրանք իրենց հաստատության սահմաններից դուրս գրեթե կապեր չունեն, կամ դրանց նկատմամբ գոյություն ունի երկյուղ, կասկած անվստահություն: Մեծահասակի հետ շփման խանգարումը դեպրիվացիայի նշան է: «Երեխա-նշանակալի հեղինակավոր մեծահասակ» շրջանակներում գոյություն ունեցող թույլ կապերը, նրանց հետ շփման, հաղորդակցման կապերի խանգարումներն իրենց հերթին բացասական ազդեցություն են թողնում նաև ուրիշների հետ շփվելու, հաղորդակցվելու գործընթացում [4, էջ՝ 220]: Արդյունքների համաձայն ,,ՍՕՍ,, գյուղի դեռահասների շրջանում ակնառու կերպով դիտարկվում է դեպրիվացիայի և ֆրուստրացիայի արտահայտվածության երևույթներ, որոնց կայուն, մշտական առկայությունը հանգեցնում են հոգեբանական անվտանգության և ապահովության զգացման կորստի:

Այսպիսով՝ հոգեբանական անվտանգության կորստի և հոգեբանական օտարացման գործընթացին բնորոշ է համալիր գործոնների առկայություն, որում առաջնային տեղ են զբաղեցնում դեռահասի անձնային առանձնահատկությունները, կյանքի փորձն ու ապրելակերպի պայմանները, հաղորդակցման հմտություններն ու անձի սոցիալական մեկուսացվածության մակարդակը, ինչպես նաև հոգեբանական անվտանգության զգացման սուբյեկտիվ գնահատականը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս հանգել հետևյալ եզրակացություններին.

- Դեռահասների հոգեբանական օտարացման գործընթացը անբարենպաստ սոցիալականացման պայմանների հետևանք է, որում առանձնակի դեր են խաղում նրանց անհատական առանձնահատկությունները կյանքի փորձն ու հաղորդակցական հմտությունների դեֆիցիտը, մեկուսացվածության բարձր մակարդակը, ինչպես նաև անձնային ցածր տրամադրության հակվածության մակարդակը: Միևնույն ժամանակ հոգեբանական օտարացումը երեխայի հոգեբանական անվտանգության զգացման կորստի վիճակ է:
- Դեռահասների հոգեբանական օտարացման գործընթացը յուրօրինակ պաշտպանական վարքագիծ է, որի հիմքում ընկած են նաև հոգեբանական անվտանգության կորստի անձնային դետերմինանտները:
- Դեռահասների հոգեբանական օտարացման և անվտանգության վիճակների ձևավորման գործընթացները, ունենալով միևնույն հոգեֆիզիոլոգիական հիմքերը, կրում են ընդհանուր սոցիալ-հոգեբանական գործոնային դետերմինանտներ:

Գրականություն

1. **Արզումանյան Ս., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ.** «Կիրառական հոգեբանության պրակտիկում». – Եր.: Զանգակ-97, 2002, էջ 154-166
2. **Մկրտումյան Մ. Պ.** Արտակարգ իրավիճակների հոգեբանության կանխարգելման և վերականգնողական հիմնախնդիրները: Ուսումնական ձեռնարկ -Եր. «Զանգակ–97»,, 2008: -320 էջ:
3. **Алексеенкова Е.** Личность в условиях психической депривации. – СПб.: Питер, 2009. -96 с.
4. Алмазов Б. Н. Психология социального отчуждения. Екатеринбург: Уральская гос. юрид. Академия, 2007. -222 с.
5. Байбородова Л.В. Преодоление трудностей социализации детей-сирот. -Ярославль,1997.- 287с.
6. Бойко В.В., О.В. Барканова Методики диагностики эмоциональной сферы. - Вып.2. – Красноярск: Литера-принт, 2009. – 237с.
7. Гусева И. С., Прядеин В. П. Психологическая структура отчуждения личности. –М.: Педагогическое образование в России, Выпуск №2, 2012 - 4с.
8. Лангмейер Й., Матейчик З. Психическая депривация в детском возрасте. Прага, 1984.- 334с
9. Фетискин Н.П. и др. Социально-психологическая диагностика развития личности и малых групп – М., 2002, -344 с.
10. Шульга Т.И., Татаренко Д.Д. //Психологические особенности подростков-сирот, не имеющих опыта социализации в семье -Электронный журнал «Психологическая наука и образование- 2013, №2, -11с.

ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКОГО ОТЧУЖДЕНИЯ ПОДРОСТКОВ В УСЛОВИЯХ УГРОЗ ПОТЕРИИ ПСИХОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ

Мкртумян М. П. (Армянский государственный педагогический университет)

В статье обсуждаются социально-психологические детерминанты психологического отчуждения и его проявления в разных условиях жизнедеятельности. Выявлены механизмы и психофизиологические закономерности поведенческих изменений психологического отчуждения и потерии психологической безопасности.

***Ключевые слова**: психологическое отчуждение, психологическая безопасность, дезадаптация, эмоциональная неустойчивость, психологическая уязвимость.*

FEATURES OF MANIFESTATION OF PSYCHOLOGICAL ALIENATION OF TEENAGERS IN THE CONDITIONS OF THREATS OF PSYCHOLOGICAL SAFETY LOSS

Mkrtumyan M. P. (Armenian State Pedagogical University, Yerevan, Armenia)

In the article social and psychological determinants of psychological alienation and its manifestation in different conditions of activity are discussed. Mechanisms and psychophysiological regularities of behavioural changes of psychological alienation and the loss of psychological safety are revealed.

***Keywords:** psychological alienation, psychological safety, disadaptation, emotional instability, psychological vulnerability.*